

**«ԼՂՀ (ԱՐՑԱԽԻ) 25-ԱՄՅԱ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐՆ ՈՒ  
ԱՐԴԻ ՄԱՐՏԱՅՐԱՎԵՐՆԵՐԸ»**

միջազգային երիտասարդական գիտաժողով  
15-18 սեպտեմբերի 2016թ.  
Արցախ (ԼՂՀ), ք.Ստեփանակերտ

**ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ**

**«25-ЛЕТИЕ ГОСУДАРСТВЕННОСТИ НКР  
(АРЦАХА):  
ДОСТИЖЕНИЯ И СОВРЕМЕННЫЕ ВЫЗОВЫ»**

международная молодёжная конференция  
15-18 сентября 2016г.  
Арцах (НКР), г.Степанакерт

**СБОРНИК МАТЕРИАЛОВ**

ԱԵԳՄՄ-ՕՄՍԱ  
ԵՐԵՎԱՆ-ԵՐԵՎԱՆ  
2016

*Հրատարակության է երաշխավորվել Ստեփանակերտի Մեսրոպ Մաշտոց  
համալսարանի Գիտական խորհրդի որոշմամբ  
Рекомендовано к публикации решением Ученого совета  
Университета Месроп Маштоц г.Степанакерта*

ՀՏԴ 94(479.25):32.001:342:06  
ԳՄԴ 63.3 (53)+66.0+67.400  
L 657

### **Խմբագրական խորհուրդ**

ի.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ ակադ. **Գ.Ս.Ղազինյան** (նախագահ), փ.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ **Ա.Ս.Սանասյան**, հ.գ.դ., պրոֆ. **Յ.Մ.Ավանեսյան**, պ.գ.դ., պրոֆ. **Վ.Ռ.Բալայան**, ի.գ.դ. **Վ.Վ.Գրուզդե**, ի.գ.դ., պրոֆ. **Ա.Յ.Խաչատրյան**, ք.գ.դ., պրոֆ. **Մ.Մ.Սարգսյան**, ք.գ.դ. **Ս.Ս.Մինասյան**, տ.գ.դ., պրոֆ. **Յ.Լ.Սարգսյան**, պ.գ.թ., դոց. **Ն.Է.Բաղդասարյան**, ք.գ.թ., դոց. **Խ.Ս.Գալստյան**, տ.գ.թ., դոց. **Ե.Ռ.Հայրիյան**, ի.գ.թ. **Ա.Յ.Հարությունյան**, ի.գ.թ., դոց. **Ա.Ա.Սանասյան**, ի.գ.թ., դոց. **Ս.Գ.Պետիկյան**

### **Редакционная коллегия**

д.ю.н., проф., акад. НАН РА **Г.С.Казинян** (председатель), д.ф.н., проф., член кор. НАН РА **А.С.Манасян**, д.п.н., проф. **Г.М.Аванесян**, д.и.н., проф. **В.Р.Балаян**, д.ю.н. **В.В.Груздев**, д.ю.н., проф. **А.Г.Хачатрян**, д.п.н., проф. **М.М.Маргарян**, д.п.н. **С.М.Минасян**, д.э.н., проф. **Г.Л.Саргсян**, к.и.н., доц. **Н.Э.Багдасарян**, к.п.н., доц. **Х.С.Галстян**, к.э.н., доц. **Е.Р.Айриян**, к.ю.н. **А.Г.Арутюнян**, к.ю.н., доц. **А.А.Манасян**, к.ю.н., доц. **С.Г.Петикян**

L 657 «ԼՂՀ (Արցախի) 25-ամյա պետականության ձեռքբերումներն ու արդի մարտահրավերները» միջազգային երիտասարդական գիտաժողովի կյութերի ժողովածու – Եր.: ԱԵԳՄՄ, 2016, 320 էջ:

Ժողովածուում ներառված են «ԼՂՀ (Արցախի) 25-ամյա պետականության ձեռքբերումներն ու արդի մարտահրավերները» խորագրով միջազգային երիտասարդական գիտաժողովի կյութերը:

В сборнике включены материалы международной молодежной научной конференции «25-летие государственности НКР (Арцах): достижения и современные вызовы».

ՀՏԴ 94(479.25):32.001:342:06  
ԳՄԴ 63.3 (53)+66.0+67.400

ISBN 978-9939-1-0465-2

© Արցախի երիտասարդ գիտնականների և  
մասնագետների միավորում, 2016

**ԱՄՆ-Ը ԵՎ ՌԴ-Ն ԼՂ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ  
ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՈՒՄ  
1992-2016ԹԹ.**

**Գրիգոր ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

*Երևանի Պետական Համալսարան  
Միջազգային հարաբերությունների ֆակուլտետ  
միջազգային հարաբերությունների և  
դիվանագիտության ամբիոնի դոցենտ, պ. գ. թ.  
[grigorbalsanyan@mail.ru](mailto:grigorbalsanyan@mail.ru)*

Մեր աշխատության մեջ նպատակահարմար գտանք ուսումնասիրել ԱՄՆ-ի և ՌԴ-ի ներգրավվածությունը ԼՂ հակամարտության կարգավորմանն ուղղված բանակցային գործընթացին, քանի որ հենց այս ուժային կենտրոններն են տարածաշրջանում վարում են ակտիվ քաղաքականություն:

2001թ. գարնանը ԱՄՆ-ն ակտիվացրեց ջանքերը ԵԱՀԿ ՄԽ միջնորդական առաքելությունում: Ապրիլի 3-6 ընդմիջման կազմակերպվեց հանդիպում Հայաստանի նախագահ Ռ.Զոհարյանի և Ադրբեյջանի նախագահ Ի.Ալիևի միջև: Բանակցությունները վարվում էին ԱՄՆ պետքարտուղար Զոլին Փաուելի միջնորդությամբ, իսկ նախագահ Ջորջ Բուշի հետ հանդիպումը նախատեսվում էր անցկացնել բանակցությունների հաջող ավարտից հետո:<sup>1</sup> ԱՄՆ միջնորդությամբ այս փորձը ձախողվեց, քանի որ Բաքու վերադառնալուց հետո Ի.Ալիևը հրաժարվեց բանակցություններում ձեռք բերված արդյունքներից: Իսկ ՀՀ նախագահ Ռ.Զոհարյանը ամռան վերջին հայտարարեց, որ սխալ կլինի ասել, թե իրենք ընդհանուր հայտարարի են եկել ընդմիջման:

2001թ. սեպտեմբերի 11-ի հայտնի իրադարձություններից հետո ԱՄՆ-ը սկսեց ողջ աշխարհում ակտիվ քաղաքականություն վարել: Հարավային Կովկասը բացառություն չկազմեց: Միացյալ Նահանգները հատկապես ակտիվացան այն ժամանակ, երբ ընդունվեց այսպես կոչված «Մեծ Մերձավոր Արևելքի» ծրագիրը, որի մեջ ընդգրկվեց նաև Հարավային Կովկասը: Այս հանգամանքը չէր կարող չանհանգստացնել Ռուսաստանի Դաշնությանը:

2006թ. դեկտեմբերի 20-ին ՌԴ արտգործնախարար Սերգեյ Լավրովը հանդիպեց լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ և ամփոփեց ՌԴ արտաքին քաղաքականությունը 2006 թվականի համար: Անդրադառնալով ԼՂ հակամարտության կարգավորմանը՝ Լավրովը նշեց, որ այս հարցում կանխատեսումներ անելու կարիք չկա: Նրա խոսքերով ՌԴ-ն

---

<sup>1</sup> Ընդմիջման ծնունդն ու վախճանը, <http://www.mediamax.am/am/news/keywest/541/>

ԱՄՆ-ի և Ֆրանսիայի հետ միասին հանդիսանում են համանախագահող պետություններ և նրանց զլխավոր ինդիքն է ապահովել անմիջական շփումը հակամարտ կողմերի միջև<sup>1</sup>: Սրանով ՌԴ-ն ցանկանում էր հասկացնել ԱՄՆ-ին, որ չի ողջունում միակողմանի միջամտությունը հակամարտության կարգավորմանը:

2007թ. նոյեմբերին Մադրիդում ԵԱՀԿ արտգործնախարարների հանդիպման ժամանակ Մինսկի խմբի կողմից ներկայացվեց հակամարտության կարգավորման վերաբերյալ մի փաստաթուղթ «այսպես կոչված մադրիդյան սկզբունքներ», որը պետք է դրվեր բանակցությունների սեղանին: Նոյեմբերի 29-ին այդ փաստաթուղթը փոխանցվեց Հայաստանի և Ադրբեջանի արտգործնախարարներին:

Մադրիդյան հանդիպումից հետո Ռուսաստանի Դաշնությունը քայլեր ձեռնարկեց բանակցային գործընթացում նախաձեռնությունն իր ձեռքը վերցնելու ուղղությամբ: 2008թ. հոկտեմբերի 2-ին մերձմուսկովյան Մայնդորֆ դղյակում ռուսական կողմի նախաձեռնությամբ տեղի ունեցավ ՌԴ-ի, Հայաստանի և Ադրբեջանի նախագահների հանդիպումը, որի արդյունքում ստորագրվեց մայնդորֆյան հռչակագիրը: Այս փաստաթուղթը բիշքեքյան արձանագրություններից հետո ստորագրված առաջին փաստաթուղթն էր, որով կողմերը համաձայնվում էին հակամարտությունը կարգավորել բացարձակապես քաղաքական ճանապարհով<sup>2</sup>: Բայց Ռուսաստանի ջանքերն ի չիք դարձան, քանի որ Ադրբեջանի մեղքով իրավիճակը շփման գծում կտրուկ լարվեց: Որոշ փորձագետներ գտնում են, որ այս պրովակացիան չէր կարող իրականացվել առանց Արևմուտքի գիտության և սրանով Արևմուտքը ցանկանում էր ցույց տալ Ռուսաստանին, որ վերջինս ի վիճակի չէ միայնակ կարգավորել հակամարտությունը:

2009թ. հուլիսին իտալական Աբվիլա քաղաքում Մեծ Ութնյակի գազաթնամալի ժամանակ Մինսկի խմբի համանախագահ երկրների ղեկավարներ Սարկոզին, Օբամա և Մեդվեդևը հանդես եկան համատեղ հայտարարությամբ, որտեղ Հայաստանի և Ադրբեջանի նախագահներին կոչ արեցին ԼՂ հակամարտությունը կարգավորել խաղաղ ճանապարհով: Նույն թվականի դեկտեմբերի 1-ից 2-ը Աթենքում, ԵԱՀԿ անդամ երկրների արտգործնախարարների հանդիպման ժամանակ, ԼՂ հակամարտության կարգավորման վերաբերյալ ընդունվեց համատեղ հայտարարություն, որտեղ ընդգծվեց ազգերի ինքնորոշման և ուժի կամ ուժի սպառնալիքի չկիրառման սկզբունքների կարևորությունը:

2011թ. հունիսի 24-ին Կազանում տեղի ունեցավ ԵԱՀԿ համանախագահ երկրների գազաթնամալով: Հանդիպմանը ներկա էին նաև Հայաստանի և Ադրբեջանի նախագահները: Օրակարգում կար փաստաթուղթ,

---

<sup>1</sup> Стенограмма выступления Министра иностранных дел России С. В. Лаврова на пресс-конференции по итогам деятельности российской дипломатии в 2006 году, <http://civilg8.ru/6900.php>

<sup>2</sup> Встреча глав РФ, Армении и Азербайджана началась в замке Майндорф, <http://ria.ru/politics/20081102/154308118.html>

որը նախօրոք համաձայնեցված էր նաև համանախագահների հետ<sup>1</sup>: Սակայն Ադրբեջանի ապակառուցողական դիրքորոշման պատճառով առաջընթացի հասնել չհաջողվեց:

2014թ. օգոստոսի սկզբներին ղարաբաղա-ադրբեջանական և հայ-ադրբեջանական սահմանին իրավիճակը խիստ լարվեց և նույնիսկ հակամարտող կողմերը սկսեցին բացեիբաց խոսել պատերազմի վերսկսման մասին: Կովկասում պատերազմի վերսկսումը ձեռնտու չէր ոչ ՌԴ-ին և ոչ էլ ԱՄՆ-ին: Համանախագահ երկրները սկսեցին մտածել Հայաստանի և Ադրբեջանի նախագահների հանդիպում կազմակերպելու մասին, որպեսզի թուլացնեն լարվածությունը: Սկզբում ծրագրվում էր հանդիպում կազմակերպել Փարիզում, սակայն հետո որոշվեց կազմակերպել ՌԴ-ի, Հայաստանի և Ադրբեջանի նախագահների եռակողմ հանդիպում: Հանդիպումը կայացավ 2014թ. օգոստոսի 10-ին Վլադիմիր Պուտինի՝ Սոչի քաղաքում գտնվող նստավայրում<sup>2</sup>: Այս հանդիպման արդյունքում լարվածությունը սահմանին թուլացավ և կրակը դադարեցվեց: Սա կարելի է համարել ԱՄՆ-ի և Ֆրանսիայի նկատմամբ ՌԴ-ի դիվանագիտական հաղթանակ և սրանով Ռուսաստանի Դաշնությունը ցույց տվեց, որ հնարավորություն ունի ազդել հակամարտող կողմերի վրա՝ կրակը դադարեցնելու համար: Ռուսաստանին ձեռնտու չէր, որ իր արևմտյան սահմաններին զուգահեռ ռազմական գործողություններ սկսվեին նաև հարավային սահմանների մոտ:

2016թ. ապրիլի 1-4-ը, ոտնահարելով նախկինում ստանձնած բոլոր պարտավորությունները և պայմանավորվածությունները, Ադրբեջանը դիմեց աննախադեպ ագրեսիայի, որին զոհ գնացին նաև ծերեր և մանուկներ: Ակնհայտ էր, որ իրավիճակը սպառնում էր դուրս գալ վերահսկողությունից և վերածել լայնամասշտաբ պատերազմի: Ստեղծված իրավիճակը ձեռնտու չէր ԵԱՀԿ ՄԽ համանախագահ պետություններին, և առաջին հերթին Ռուսաստանի Դաշնությանը, քանի որ պաշտոնական Մոսկվային ձեռնտու չէր նոր պատերազմ սեփական սահմանների մոտ: Այդ պատճառով հենց առաջին օրվանից պաշտոնական Մոսկվան նախագահ Վ. Պուտինի մակարդակով կողմերին հանդարտության կոչ արեց: Բացի այդ տարածաշրջան ժամանեց ՌԴ վարչապետ Դ. Մեդվեդևը, ով նախ եղավ Երևանում, ապա մեկնեց Բաքու: Բացի այդ ակտիվ գործունեություն էր ծավալել նաև ՌԴ Պաշտպանության նախարարության Գլխավոր շտաբը, ում ղեկավարի անմիջական մասնակցությամբ Մոսկվայում տեղի ունեցավ ՀՀ-ի և Ադրբեջանի ՊՆ Գլխավոր շտաբների պետերի հանդիպումը, որի արդյունքում հայտարարվեց զինադադար: Խոսակցություններն այն մասին, որ զինադադարի խնդրանքով ՌԴ-ին դիմել են Ադրբեջանի իշխանությունները, հաստատեց ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը՝ 2016թ. մայիսի 31-ին Աստանայում ԵՏՄ անդամ պետությունների նախագահների հան-

<sup>1</sup> Саммит глав РФ, Азербайджана и Армении, который прошел сегодня в Казани, завершился без достижения договоренностей., <http://www.rbc.ru/rbcfreenews/20110624212217.shtml>

<sup>2</sup> Встреча с Сержем Саргсяном и Ильхамом Алиевым, <http://www.kremlin.ru/news/46427>

դիպման ժամանակ: ԶՅ նախագահը նշեց, որ Հայաստանը չէր կարող անմասն մնալ Ադրբեջանի կողմից ԼՂ նկատմամբ ագրեսիվ գործությունների դեպքում: Անդրադառնալով քառօրյա պատերազմին՝ Ս. Սարգսյանը նշեց, որ զինադադարի գործում մեծ դեր խաղաց Ռուսաստանի Դաշնությունը: Նա նաև առանձնահատուկ նշեց, որ ռազմական գործողությունները դադարեցվել էին միայն այն բանից հետո, երբ **Ադրբեջանը դիմել էր ՌԴ-ին՝ զինադադարի ռեժիմի վերահաստատման խնդրանքով** (ընգծումը մերն է-Գ.Բ.)<sup>1</sup>:

Քառօրյա պատերազմից մի քանի օր անց՝ ապրիլի 7-ին, Ստեփանակերտ ժամանեցին ԵԱՀԿ ՄԽ համանախագահներ Իգոր Պոպովը /ՌԴ/, Պիեռ Անդրիոն /Ֆրանսիա/, Ջեյմս Ուորրիքը /ԱՄՆ/ և ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ, դեսպան Անջեյ Կասպրիկը և հանդիպում ունեցան Արցախի նախագահ Բակո Սահակյանի հետ: Վերջինս Ադրբեջանի ագրեսիան որակեց որպես քաղաքակիրթ հակառակորդի նետված լուրջ մարտահրավեր, միաժամանակ ընդգծելով, որ Արցախի Պաշտպանության բանակը կասեցրել և կասեցնելու է ցանկացած ոտնձգություն՝ հավելելով, որ **ԵԱՀԿ Միսկի խմբից ակնկալում է կոշտ և հասցեական գնահատականներ** (ընգծումը մերն է-Գ.Բ.)<sup>2</sup>:

Լարվածությունը թուլացնելու նպատակով հակամարտող կողմերի միջև հանդիպում կազմակերպելու միջնորդների ջանքերը պսակվեցին հաջողությամբ: 2016թ. մայիսի 16-ի երեկոյան ԶՅ նախագահ Սերժ Սարգսյանը և Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը Վիեննայում մասնակցեցին ԼՂ հակամարտության կարգավորմանը վերաբերվող քննարկմանը: Նախագահներից բացի հանդիպմանը մասնակցում էին նաև ԵԱՀԿ ՄԽ համանախագահ երկրների արտգործնախարարները, դեսպանները, ինչպես նաև ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչը: Համանախագահ երկրների ներկայացուցիչները պնդեցին 1994թ. զինադադարի պահպանման անհրաժեշտությունը: Բացի այդ համաձայնություն ձեռքբերվեց մշտադիտարկման և միջադեպերի հետաքննության մեխանիզմի ներդրման, ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցչի թիմի կարողությունների ավելացման և հակամարտության կարգավորման բանակցային գործընթացի հնարավոր վերսկսման ուղղությամբ<sup>3</sup>:

Վերլուծելով Վիեննայի հանդիպումը, կարել է մի քանի փաստ արձանագրել, որոնք անկասկած կարևոր են հայկական կողմի համար: Նախ հստակ արձանագրվեց, որ անհրաժեշտ է պահպանել 1994թ. Չինադա-

<sup>1</sup> Հայաստանը հետևողականորեն աշխատելու է Վիեննայի պայմանավորվածությունների իրականացման ուղղությամբ. ԶՅ նախագահ, <http://www.armenpress.am/arm/news/849152/president-of-armenia-armenia-will-be-consistent-with-implementation-of-vienna-agreements.html>

<sup>2</sup> Բակո Սահակյանը ԵԱՀԿ ՄԽ-ին. Բանակը կասեցնում և կասեցնելու է ցանկացած ոտնձգություն, <http://news.am/arm/news/321160.html>

<sup>3</sup> Վիեննայում համաձայնել են քայլեր ձեռնարկել միջադեպերի հետաքննության մեխանիզմի ներդրման ուղղությամբ, <http://www.armenpress.am/arm/news/847441/viennayum-hamadzaynel-en-qayler-dzernarkel-mijadepери-hetaqnnutyam.html>

դարը: Հիշեցնենք, որ Ադրբեջանը դիմել էր ՄԱԿ-ի Աև՝ 1994թ. Չինադարը չեղյալ հայտարարելու պահանջով: Բացի այդ, չնայած Բաքվի այն հայտարարություններին, որ իրենք կվերադառնան բանակցային սեղանին միայն այսպես կոչված «գրաված» տարածքներից հայկական ուժերի դուրս բերումից հետո, Իլիամ Ալիևը ստիպված էր դրժել իր իսկ հայտարարությունները՝ վերադառնալով բանակցային սեղանին: Եվ վերջին հանգամանքն այն էր, որ որոշում ընդունվեց ներդնել մշտադիտարկման և միջադեպերի հետաքննության մեխանիզմներ: Սա կարծում եմ փոքր, բայց հաղթանակ էր հայկական դիվանագիտության համար:

### **Գրիգոր Բալասանյան**

**ԱՄՆ-Ը ԵՎ ՌԴ-Ն ԼՂ ՀԱՎԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ 1992-2016ԹԹ.**

**Բանալի բառեր՝ Ռուսաստանի Դաշնությունը, ԱՄՆ, Հարավային Կովկաս, Լեռնային Ղարաբաղ, Ադրբեջան**

Հոդվածում ուսումնասիրվում են ԱՄՆ-ի, և ՌԴ-ի արտաքին քաղաքականության խնդիրները տարածաշրջանում և հատկապես ԼՂ հակամարտության կարգավորման գործընթացում: Ներկայացվում է երկու երկրների մասնակցությունը բանակցային գործընթացին: 2001թ. սեպտեմբերի 11-ից հետո ԱՄՆ-ը ակտիվացրեց իր քաղաքականությունը նաև Հարավային Կովկասում առկա հակամարտությունների կարգավորման գործընթացում: Հոդվածում ներկայացվում են նաև Ռուսաստանի քաղաքական ջանքերը հակամարտությունը Մինսկի խմբից առանձին կարգավորելու ուղղությամբ: Հետազոտության վերջում անդրադարձ է կատարվել նաև ԵԱՀԿ ՄԽ համանախագահ երկրների գործունեությանը 2016թ. ապրիլի քառօրյա պատերազմից հետո:

*Григор Баласанян*

**США И РФ В ПЕРЕГОВОРНОМ ПРОЦЕССЕ УРЕГУЛИРОВАНИЯ  
КОНФЛИКТА В НАГОРНОМ КАРАБАХЕ  
1992-2016ГГ.**

**Ключевые слова:** *Россия, США, Южный Кавказ, Нагорный Карабах, Азербайджан*

В статье рассматриваются вопросы внешней политики РФ и США в регионе и особенно в процессе урегулирования конфликта в Нагорном Карабахе. Представлено участие двух стран в переговорном процессе. После 11-го сентября 2001г. США активизировали свою политику в переговорном процессе урегулирования конфликтов Южного Кавказа. В статье представлены также политические усилия России урегулировать конфликт в Нагорном Карабахе отдельно от Минской группы ОБСЕ. В конце исследовано действие стран сопредседателей Минской группы ОБСЕ после апрельской 4-ех дневной войны.

*Grigor Balasanyan*

**THE USA AND THE RF IN THE NEGOTIATION PROCESS OF THE  
CONFLICT REGULATION IN NAGORNO KARABAKH  
1992-2016yy**

**Key Words:** *The Russia, the USA, the Southern Caucasus, the Nagorno Karabakh, Azerbaijan*

The article discusses the issue on the foreign policy of the RF and the USA in the region, especially during the conflict regulation process in the Nagorno Karabakh. The participation of the two countries in the negotiation process is presented. The USA activated its strategy in the negotiation process of the conflict regulation in the Southern Caucasus after the 11, September, 2001. The issue presents the political attempts of the RF in the regulation of the Nagorno Karabakh conflict apart from the Minsk group of OSCE. The final part of the issue discusses the action of the co-chair countries of the OSCE Minsk Group after the 4 -days war in April.